# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԵՄՀԱՐ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/55 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 3 | Apogee 2100 | Shantou Institute of Ultrasonic Instruments Co., Ltd | Շարժական ուլտրաձայնային համակարգ, համալրված առաջադեմ տեխնոլոգիաներով, ինչպիսիք են ամբողջական թվային լայն դիապազոնի ճառագայթի ձևավորումը, բազմալիքային զուգահեռ մշակումը, գունավոր դոպլերը, ուղղորդված էներգետիկ և սպեկտրալ դոպլերը, հյուսվածքային և զտված հարմոնիկ պատկերավորումները, աղմուկի նվազեցման, տարածական համադրման, տրապեցանման պատկերավորումը: Կիրառման ոլորտներ. Ընդհանուր սոնոգրաֆիա, որովայնային, կմախքամկանային և հոդային հետազոտություններ, վահանագեղձ, փոքր մասնիկների և անոթների դուպլեքս հետազոտություններ: Ցուցադրման էկրան. Բարձր թողունակության գունավոր Հեղուկ-բյուրեղային՝ 15 դույմ: Ներկառուցված մարտկոց 2 ժամ առանց հոսանք աշխատանքի համար: Սկանավորման մեթոդներ՝ Էլեկտրոնային կոնվեքս, Էլեկտրոնային գծային, Էլեկտրոնային սրտաբանական փազային: Պատկերման ռեժիմներ. 2D (B ռեժիմ), B ռեժիմի ավտոմատ կարգավորում, M-ռեժիմ, իմպուլս ալիքային ռեժիմ PW, գունավոր դոպլեր (CDI), հյուսվածքային և զտված հարմոնիկ ռեժիմ (THI/PHI), |

| | | | |
|---|---|---|---|
| | | | էներգետիկ դոպլեր և ուղղորդված էներգետիկ դոպլեր պատկերավորում (PDI/DPDI), Հյուսվածք-կախյալ պատկերավորում (TSI), տրապեցանման պատկերավորում: Ցուցադրման ռեժիմների համակցում. 256 մոխրագույնի մակարդակ, 2B ռեժիմ, 4B ռեժիմ, B + CDI, B + PDI, B + M, B + PW, B + CDI + PW, B + PDI + PW: Հարմոնիկ պատկերավորում - բոլոր տվիչների հետ ակտիվացման հնարավորություն: Յուրաքանչյուր տվիչի և սկանավորման յուրաքանչյուր ռեժիմի համար երեք ընտրովի հաճախականություններ: Անհատական ռեժիմներում պատկերի ստացման ալգորիթմի օպտիմալացման և աղմուկի նվազեցման հնարավորություն: Անատոմիական կառուցվածքների հայտնաբերումը բարելավելու համար օպտիմալացման առկայություն: Տրապեցանման պատկերավորում բոլոր գծային տվիչների օգնությամբ, կրծքագեղձի, անոթների, կմախքա-մկանային և վահանագեղձի պատկերովորման ռեժիմներում կիրառման համար: Տվիչի միաժամանակ միացման համար ակտիվ կոնեկտոր անմիջապես ՈւՁ համակարգի վրա՝ 2: Պատկերի ձևաչափը. Ամբողջական, բաժանված, բազմակի, ձախ / աջ, վերև / ներքևի պատկերավորում: B ռեժիմ. Ուլտրաձայնի ուժեղացում՝ կարգավորվող, Խորությունը՝ 40 սմ, Պատկերի խոշորացում՝ 10 անգամ, Դինամիկ տիրույթը՝ 200 դբ: Հյուսվածքային պատկերավորման օպտիմիզացիայի 4 տեսակ (օրինակ ՝ ճարպ, մկան, հեղուկ, նորմալ): Ավտոմատ օպտիմալացման առկայություն: Իմպուլս-ալիքային ռեժիմում արագության միջակայք՝ 0,01-6 մ / վ: PRF հաճախականություն՝ 1-16ԿՀց: Դիրքի և ծավալի կարգավորում իմպուլս ալիքային դոպլերի համար՝ 0,8-20 մմ: Չափումներ և հաշվետվություններ. Բոլոր ստանդարտները B, M և դոպլեր ռեժիմներում: Որովայնի խոռոչ, կրծքագեղձ, գինեկոլոգիա, մանկաբարձական, մանկաբուժական, փոքր մասեր, վահանագեղձ, անոթային, ստանդարտ կենսաչափության հաշվետվություններ և օգտագործողի կողմից ընտրովի հաշվետվություններ, բոլոր հաշվետվությունները ավտոմատ կերպով պահվում են համակարգում: Էլեկտրաէներգիայի սնուցումը ՝220Վ / 50Հց: Տվիչների լրակազմ. |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Էլեկտրոնային կոնվեքս՝ Հաճախականությունը՝ 1-ից 7 ՄՀց, Բացվածքը ՝ 50 մմ, Էլեկտրոնային գծային. Հաճախականությունը՝ 4-ից 16 ՄՀց, Բացվածքը՝ 50 մմ: Երաշխիք՝ 24 ամիս: Համակարգի կարգաբերում և ուսուցում սերտիֆիկացված մասնագետի կողմից: Սարքը նոր է, չօգտագործված: Հավաքածուն ներառում է բոլոր անհրաժեշտ լրացուցիչ պարագաները ՝սարքավորման ամբողջական գործարկման համար: Ստանդարտներ (փաստաթղթային ապացույց (վկայականների պատճեն): ISO13485, CE mark (2017/745 directive): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЭМАР ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/55 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | марка | наименование производителя | технические характеристики |
| 3 | | | |